Հաստատված է
«Արփա- Սևան» ԲԲԸ-ի
բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից
Ժողովի նախագահ՝
Ատոմ Դավթյան
"12" մայիսի 2015թ.

«Արփա-Սևան» ԲԲԸ
շահութաբաժինների վճարման կարգ

1.Սույն կարգը մշակված է "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքին համապատասխան գործող օրենսդրության և «Արփա- Սևան» Բաց Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության հիման վրա և սահմանում է Ընկերության կողմից շահութաբաժինների վճարման կարգը:
2. Ընկերությունը իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր մասնակիցներին տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
3.Շահութաբաժինները վճարվում են ֆինանսական (հաշվետու) տարվա զուտ շահույթից և կամ (կուտակված շահույթից) ՀՀ դրամով՝ կամ բաժնետերերի որոշմամբ այլ գույքով:
4.Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումը ընդունում է ժողովը՝ խարհրդի առաջարկությամբ:
Ընդ որում՝
4.1.Շահույթի առկայության դեպքում վճարվելիք շահութաբաժինների նվազագույն չափը չի կարող պակաս լինել ֆինանսական (հաշվետու) տարվա զուտ շահույթի 10 տոկոսից, բայց ոչ պակաս քան 51.130 հազ. ՀՀ դրամ:
4.2.Եթե հաշվետու տարվա զուտ շահույթի գումարը չի բավարարում շահութաբաժինների նվազագույն չափի վճարման համար, ապա շահութաբաժնի վճարումն իրականացվում է կուտակված շահույթից:
4.3.Հաշվետու տարում շահույթի բացակայության դեպքում շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունում է ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:
5.Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի շահութաբաժինները վճարելու մասին որոշմամբ:
Շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ կազմվում է բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ: